ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/275

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.12.2020թ. թիվ 26/26-1/19763-2020 գրությամբ «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության 25.12.2020թ. թիվ ՊՆ//4423-2020 գրության հիման վրա 29.12.2020թ. թիվ 26/26-1/19763-2020 գրությամբ նախաձեռնել է «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված

14.01.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/9 ծածկագրով ընթացակարգին և 06.02.2020թ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա կնքվել է ԳՀԱՊՁԲ-20-7/9-1 ծածկագրով պայմանագիրը: Հետագայում 15.04.2020թ-ին կնքվել է ԳՀԱՊՁԲ-20-7/9-1 ծածկագրով պայմանագրին կից թիվ 1 համաձայնագիրը, որով մեր կազմակերպությունը պարտավորվել է 2020թ-ի ապրիլ, մայիս, հունիս ամսին մատակարարել 13092 կգ հաճարաձավար /հաճար/:

Ստորև ներկայացնում ենք Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման անփույթ և անպատասխանատու գործելաոճի նկարագրությունը, որի պատճառով խախտվել է գնման ընթացակարգի ողջ տրամաբանությունն ու բնականոն ընթացքը և ինչն էլ հանդիսացել է մեր կազմակերպության կողմից ապրանքի մատակարարումների ուշացման հիմնական պատճառը (պատճառ է հանդիսացել նաև կորոնավիրուսային համավարակը, որի հետևանքով մեր կազմակերպությունը 01.07.2020թ-ից անորոշ ժամկետով դադարեցրել է իր գործունեությունը), որի արդյունքում մատակարարի կողմից լուծվել է 06.02.2020թ-ին կնքված ԳՀԱՊՁԲ-20-7/9-1 ծածկագրով պայմանագիրը.

2020թ-ի հունվարի 11-ին ուժի մեջ է մտել ՀՀ կառավարության 26 դեկտեմբեր 2019թ-ի N 1919-Ն որոշումը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ, (https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=138105) որով ի թիվս այլ ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվել են ֆինանսական միջոցներ նաև մեր կազմակերպության կողմից մատակարարվելիք 13092 կգ հաճարաձավար /հաճար/-ի մասով,սակայն Պատվիրատուն խախտելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 18-րդ կետը, նախ գնումների պլանում փոփոխությունը կատարել է և gnumner.am կայքում հրապարակել է 02.03.2020թ-ին (չպահպանելով Կարգի 18-րդ կետով սահմանված ժամկետները), այնուհետև կրկին խախտելով Կարգի 18-րդ կետը՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին է ուղարկել 26.03.2020թ-ին (կրկին չպահպանելով Կարգի 18-րդ կետով սահմանված ժամկետները):

1. ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 18-րդ կետ՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետ՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի,իրավունքների և պարտականությունների իրագործման ուղղված գործողությունների ամբողջություն է:

3. ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգ, որը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝փուլ առ փուլ և ժամկետները:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը , որ Ընթացակարգն իրականացվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ, խնդրում ենք «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով նախատեսվող պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/275 ընթացակարգի շրջանակներում 15.01.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.12.2020թ. թիվ ՊՆ//4423 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի միջև 06.02.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/9-1 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի ա) և բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. դեկտեմբերի 22-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 24.12.2020թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/275 ընթացակարգի շրջանակներում 15.01.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/275 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/275 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի միջև 06.02.2020թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/9-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ ապրանքի մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության պահանջները:

3. Թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/9-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի շրջանակներում 15.04.2020թ. կնքվել է թիվ 1 համաձայնագիրը, որին կից N 1 Հավելվածով՝ գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

Հ/Հ	Գնման առարկա	Չ/Մ	Քանակ	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը ըստ ամիսների		
						ապրիլ	մայիս	հունիս
1	Հաճարաձավար /հաճար/	կգ	13092	234	3063528	5000	5000	3092

4. Համաձայն ՀՀ ՋՈՒ թիկունքի պետ-վարչության պետի 07.12.2020թ. գրության՝ ՀՀ ՋՈՒ ԹՎ պարենային ծառայության մասով կատարված համապատասխան վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի միջև 06.02.2020թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/9-1» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը ՋՈՒ կարիքների համար պետք է մատակարարեր 13092 կգ հաճարաձավար, սակայն չի մատակարարել: Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությունը՝ առաջարկվել է Պայմանագիրը չմատակարարված ապրանքատեսակի մասով միակողմանի մասնակի լուծել:

5. Համաձայն ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության պետի 18.12.2020թ. զեկուցագրի՝ առաջարկվել է միակողմանի լուծել ՀՀ ՊՆ և «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/9-1» պայմանագիրը՝ «հաճարաձավար» ապրանքատեսակի ապրիլ ամսվա չմատակարարված 5000 կգ (153 օր ուշացում), մայիս ամսվա՝ 5000 կգ (134 օր ուշացում) և հունիս ամսվա՝ 3092 կգ (112 օր ուշացում) մասով:

6. Պատվիրատուն «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ին ուղղված 23.12.2020թ. թիվ ՆՏԱ-6477 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի միջև 06.02.2020թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/9-1» ծածկագրով գնման պայմանագրի և դրան կից՝ 15.04.2020թ. կնքված համաձայնագրի շրջանակներում Ձեր ընկերությունը 2020թ. ապրիլ-հունիս ամիսներին պետք է մատակարարեր 13092 կգ «հաճարաձավար /հաճար/» ապրանքատեսակ, որը չի մատակարարել: 03.06.2020թ. ընկերության կողմից մատակարարվել է 6292 կգ և 6800 կգ հաճարաձավար, որոնց նմուշները լաբորատոր փորձաքննության արդյունքում չեն համապատասխանել պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի ա) և բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. դեկտեմբերի 22-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ Պայմանագիրը (Համաձայնագիրը):

Տեղեկացնում եմ, որ «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 208 413 ՀՀ դրամ՝ որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն և 30635 ՀՀ դրամ՝ որպես տուգանք՝ Պայմանագրի 6.3 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 306 353 ՀՀ դրամ՝ որպես տուժանք (պայմանագրի կատարման ապահովում)»:

7. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 24.12.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.12.2020թ. թիվ 26/26-1/19763-2020 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.12.2020թ. թիվ ՊՆ//4423-2020 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի միջև 06.02.2020թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/9-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից N 1 Հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ ապրանքի մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության պահանջները:

Թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/9-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի շրջանակներում 15.04.2020թ. կնքվել է թիվ 1 համաձայնագիրը, որին կից N 1 Հավելվածով՝ գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

Հ/Հ	Գնման առարկա	Չ/Մ	Քանակ	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը ըստ ամիսների		
						ապրիլ	մայիս	հունիս
1	Հաճարաձավար /հաճար/	կգ	13092	234	3063528	5000	5000	3092

Համաձայն ՀՀ ՋՈՒ թիկունքի պետ-վարչության պետի 07.12.2020թ. գրության՝ ՀՀ ՋՈՒ ԹՎ պարենային ծառայության մասով կատարված համապատասխան վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի միջև 06.02.2020թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/9-1» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը ՋՈՒ կարիքների համար պետք է մատակարարեր 13092 կգ հաճարաձավար, սակայն չի մատակարարել: Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությունը՝ առաջարկվել է Պայմանագիրը չմատակարարված ապրանքատեսակի մասով միակողմանի մասնակի լուծել:

Համաձայն ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության պետի 18.12.2020թ. զեկուցագրի՝ առաջարկվել է միակողմանի լուծել ՀՀ ՊՆ և «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի

միջև կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/9-1» պայմանագիրը՝ «հաճարաձավար» ապրանքատեսակի ապրիլ ամսվա չմատակարարված 5000 կգ (153 օր ուշացում), մայիս ամսվա՝ 5000 կգ (134 օր ուշացում) և հունիս ամսվա՝ 3092 կգ (112 օր ուշացում) մասով:

Պատվիրատուն «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ին ուղղված 23.12.2020թ. թիվ ՆՏԱ-6477 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի միջև 06.02.2020թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/9-1» ծածկագրով գնման պայմանագրի և դրան կից՝ 15.04.2020թ. կնքված համաձայնագրի շրջանակներում Ձեր ընկերությունը 2020թ. ապրիլ-հունիս ամիսներին պետք է մատակարարեր 13092 կգ «հաճարաձավար /հաճար/» ապրանքատեսակ, որը չի մատակարարել: 03.06.2020թ. ընկերության կողմից մատակարարվել է 6292 կգ և 6800 կգ հաճարաձավար, որոնց նմուշները լաբորատոր փորձաքննության արդյունքում չեն համապատասխանել պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի ա) և բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. դեկտեմբերի 22-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ Պայմանագիրը (Համաձայնագիրը):

Տեղեկացնում եմ, որ «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 208 413 ՀՀ դրամ՝ որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն և 30635 ՀՀ դրամ՝ որպես տուգանք՝ Պայմանագրի 6.3 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 306 353 ՀՀ դրամ՝ որպես տուժանք (պայմանագրի կատարման ապահովում)»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 24.12.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>30 օրից ավելի</u>,***

Այսպիսով՝ համաձայն գործում առկա նյութերի՝ արձանագրում եմ, որ «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ն իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 06.02.2020թ. կնքված Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարման ժամկետը խախտել է 30 օրից ավելի, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ինչ վերաբերում է Ընկերության այդ դիտարկմանը, որ Պատվիրատուն Ընթացակարգի շրջանակներում խախտել է Կարգի 18-րդ կետով սահմանված ժամկետները, ապա հարկ եմ համարում հայտնել, որ Ընթացակարգի արդյունքում արդեն իսկ 06.02.2020թ. կնքվել են թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/9-1» պայմանագիրը և 15.04.2020թ. թիվ 1 համաձայնագիրը, որոնցով հստակ սահմանվել են կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ինչը հաստատվել է կողմերի՝ «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության ստորագրություններով: Այսինքն՝ Ընկերության կողմից Պատվիրատուի գործողություններին գնահատական տալը, մասնավորապես՝ գնման գործընթացին առնչվող ընթացակարգային ենթադրյալ խախտումներ վկայակոչելը, արդեն իսկ ստորագրված Պայմանագրի և թիվ 1 համաձայնագրի առկայության պայմաններում, այն էլ դրանց շրջանակներում ստանձնած պարտավորությունները խախտելուց հետո, չի կարող ազդել ՍՑ-ՆԳ-2020/275 ընթացակարգի ելքի վրա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.12.2020թ. թիվ 26/26-1/19763-2020 գրությամբ «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**